## ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 32-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*1952 թվականի ապրիլի 28-ին Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նիստը, նվիրված Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին։*

*Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Արգար Հովհաննիսյանի ներածական խոսքից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները.*

*1. Սովետական կարգերի հաղթանակն Ադրբեջանում։ Զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մ. Հակոբյան։*

*2. Սովետական Ադրբեջանի տնտեսության և կուլտուրայի ծաղկումը 32 տարվա ընթացքում։ Զեկուցող՝ տնտեսական գիտությունների թեկնածու Գ. Ն. Սահակյան։*

*3. Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության արտացոլումը ադրբեջանական սովետական գրականության մեջ։ Զեկուցող՝ Ա. Հ. Սուլեյմանով։*

*Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձին նվիրված գիտական սեսիային մասնակցեցին Ադրբեջանի և Վրաստանի Գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները։*

*Սեսիայում կարդացված զեկուցումները կտպագրվեն «Տեղեկագրի» հերթական համարներում։*

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ, ՆՎԻՐՎԱԾ ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻԻ ԾՆՆԴՅԱՆ 500 ԱՄՅԱԿԻՆ

*1952 թ. ապրիլի 28-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված իտալական մեծ նկարիչ և գիտնական Լեոնարդո Դա Վինչիի ծննդյան 500-ամյակին։*

*Նիստը բացվեց Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի ներածական խոսքով, որից հետո լսվեցին հետևյալ զեկուցումները.*

*1. Լեոնարդո Դա Վինչիի կյանքը և գործունեությունը (զեկուցող՝ արվեստագիտության թեկնածու Մ. Ս. Սարգսյան)։ 2. Լեոնարդո Դա Վինչիի մեխանիկան (զեկուցող՝ ԳԱ իսկական անդամ Ն. Խ. Հարությունյան)։ 3. Լեոնարդո դա Վինչին և հայ կուլտուրան (զեկուցող՝ պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. Պարսամյան)։ 4. Լեոնարդո Դա Վինչին և նրա բժշկական հայացքները (զեկուցող՝ բժշկական գիտ. թեկնածու Դ. Հարությունյան)։*

*Լեոնարդո Դա Վինչիի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածը կտպագրվի «Տեղեկագրի» հաջորդ համարում։*